

ՏԻՐ ԷՒ ՏՆՈՐԷՆ

Ե. ԹՈՐՈՍՏԻԱՆ

Նամակ կամ որևէ

գրութիւն պէտքէ ուղղել առ

Տնօրին ԱՐՇԱԼՈՅՍ Մագրի


ԳԱՅԻՐԷ (Եգիպտոս)

E. TOROSSIAN

Dirac. propr. du journal armenien

ARCHALOUYCE

LE CAIRE (EGYPTE)



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ՉՈՐԵՔՄԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱՄԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԿԻՊՏՈՒԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ոչ յամիկ	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿՐԵՆԻՐ	
Տարեկան	20
Վեցամսեայ	12

ԲԱՄԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՆԽԻԿ ԵՒ ԹՂԹԱՄԱՐԻ ԾԱԽՔՔ ԽՆՐԱԳՐՈՒՔԵԱՆ ՎՐԱՅ Է՛

ԽՆՐԱԳՐՈՒՔԵԱՆ ՈՂՂՐԱՍԸ ԳՐԱՔԻՆԸ ԵՍ չ'ԵՆ ՏՐՈՒՐ

Ա.ՉԴԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ Կանխիկ վճարելի էն

ԳՈՐԾ ՓՆՏՈՂՆԵՐՈՒՆ

—*—

«Արշալոյս» ի ծաւալը առաջիկայ Երբորդ չըջանի սկիզբէն (1 Օգոստոս) 5 սիւնակներու վերածել որոշուած ըլլալով, գրաշարներու պէտքը զգալի պիտի լինի. և որովհետեւ Եգիպտոսի մէջ այդ արհեստին հետեւողները հազուադիւրս եղած են՝ ասկէ առաջ տպագրութեան գործը շատ սահմանափակ լինելուն համար, հարկ է որ գրաշարութիւնը այլ ևս արհեստներու կարգը անցնի և անորմով զբաղողներ գտնուին:

Ուստի անոնք որ կը փափաքին գրաշարութիւն ուսանիլ և իրենց պարուստի միջոց հայթայթել, թող դիմեն թերթիս Խմբագրատունը, ուր վարձ գրաշարի մը առաջնորդութեամբ քիչ օրէն արհեստի մը տէր պիտի լինին:

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ

ՀԱՍԱՐ

Անտարբերութեան այս տափարակ առաջադիւն վրայ, ուր անաւանդներու տրակար շշուէր կուգայ շոշափել միշտ ականջներդ, ու անձնամոռացութիւնը իւր հիմը դրած է փտած ու տխրած ուղեղներու մէջ, երբ ստորնութեանց ահագին շարքեր հետզհետէ կուգան կը շարունակ աչացդ առջև, անկարելի կըլլայ քեզ այլևս առանց արդար վայրոյթի մը արտայայտութեան ակնարկներ նետել ու անցնիլ, բոլորովին գարձած մեքենայութեանց, անիրաւութեանց և կամ զրկանքներու վրայ՝ որոնք գոգես կեանքի էական պայմաններ՝ կը կատարուն շուրջ առանց վայրկեան մը իսկ գաղար առնելու:

Հոն՝ հզօր օրէնքի անուան տակ խել կ'աշխատի տկարին իրաւունքները, անդին անիրաւութիւնը կը ջանայ խեղդել իւր մէջ արդարութեան ձայնը, ուրիշ անկիւն մը ազնուութիւնը տեղի տալ կ'ստիպուի Եկրիկներու առաջ, որոնք մութին մէջէն կը թռուին թունաւոր սլաքներու պէս, վերաւորելու համար ապականութեանց տարափէն գերծ մնացած ազնիւ ու անկեղծ սրտեր:

Տկարը միշտ կը ձգտի ազատիլ բռնութեան ահռելի ճիրաններէն, ցաւագին հեծկլտուքներու մէջ խեղդելով յաճախ իր տառապանքները, միւս կողմէն զօրաւորը ուսած ու փրօցած իր գործած անհամար նախճիրներուն մէջ, իւր անարգ քմահաճոյցը առարկան, խաղալիքը գարձնել կ'աշխատի

տկարը որ կամաց կամաց կ'ընկճի ու կ'ըստիպուի գլուխ ծռել բռնակալին հզօր ու բիրտ ուժին ներքև, անիծելով իւր բաղդը, անիծելով վերջապէս այն պատճառը, որ զինքը նետած է ցաւերու այս լաբիրինթոսը:

Տկարը միշտ արհամարհուած է այն օրէն ի վեր, յորում նախախնամութիւնը առաջին քարը դրաւ թշուառութեանց այս ահագին շէնքին, քիչ յետոյ նա գիտեց բարձրէն՝ շատ բարձրէն իւր այս խոշոր ձեռակերտը, զղջաց զայն ստեղծելուն ու սկսաւ արհամարհանքի տարափներ տեղացնել աւոր վրայ, այդ օրէն ի վեր նա անտարբեր մնաց հանդէպ այս հսկայ զանգուածին ուր միլիօնաւորներ կը տառապին ու անթիւ հաւածեալներու գառնագին ողբերը կը լսուին հեռուէն էն. նա գոցեց իւր ականջները մտրդկայէն գծադրութեանց ձայնին առաջ ու չի լսեց արդար բողոքները այդ թըշուառ էակներուն. բողոքներ՝ որոնք անոնց վշտակիր ու վերաւորեալ սրտերէն կը բըզխէին: Քիչ քիչ մարդկութիւնը ընդօրինակեց է ին այդ անտարբերութիւնը, ու սկսաւ սառն աչօք նայիլ տկարին, հարստահարեալին՝ «Ես» ի փոքրիկ նշուլիկներ սնուցանելով իւր սրտին մէջ. վերջապէս այդ օրէն ի վեր սայն գրութիւնը մեծցաւ, ընդարձակեցաւ, ու եսասիրութեան անքակտելի հիմը դրաւ մեր մէջ, կեանքի էական տասնաբանեանքէն մին գառնալով:

Գիտութիւնը՝ որ յեղաշրջեց մարդկութեան այն ամեն գուեհիկ սովորութիւնները, որոնք մեր բնական վայրենի ձիւքերն էին, չի կարողացաւ ջնջել մեր մէջէն այս սովորութիւնը, այլ ընդհակառակը՝ աւելի ընդլայնեց անոր ծաւալը, որ վերջապէս օր մ'ալ բաց գտնելով անոր տան (այսինքն վարժարանին) գուռը, սպրդեցաւ այդ սուրբ յարկին մէջ, ուր առանց ընդգիծութեան քաջալերութիւն գտաւ: Կամաց կամաց վերոյիշեալ գրութիւնը հոն ալ գործագրելի դառնալով, ահագին բայց խուլ պայքար մը սկսաւ մղուիլ այդ յարկին ներքև. պայքար մը որով հոգաբարձուն ջախջախել կը ջանար Տնօրէնին իշաւասութիւնները, Տնօրէնը ուսուցչին, և ուսուցչը՝ այդ գրքադր էակը, միշտ կը հաւածուէր հրամայելու, իշխելու անզուսպ փափաքէն, որ կ'եռար իշխողին անսանձ կերքը պարուրող սրտին մէջ. այս՝ այդ յարկին ներքև այլ ևս սկսաւ խեղդուիլ ուսուցչին տկար ձայնը, սկսաւ անոր իրաւունքները բռնաբարուիլ, հոգաբարձուն արձակած և օրէնքի խաբուսիկ գոյներով ներկուած պատգամներուն

առջև. ասոնք ստեպ առանց ո'ւէ առարկութեան և կամ գծուաշուրթեան բաղխելու գործագրելի կըլլան միշտ, որով խեղճ ուսուցիչը կ'ստիպուի միանգամ ընդ միշտ հեռանալ իւր արդար իրաւունքներէն. իրաւունքներ՝ զորոս շահած է յոգնելով, տըրնելով, պոռալով, հոգին մաշեցնելով ստուեցնելու, կրթելու համար մեր պղտիկները, որոնք մեր ապագայ սերունդը, մեր յոյսը՝ մեր երջանկութիւնն են. և գիտէ՞ք ինչպէս կը վարձատրուին խեղճները այդ չարաբանաց փոխառէն. անգարմանելի կըրծախտով մը, և վերջապէս օր մ'ալ հոգաբարձուն և կամ Տնօրինութեան քաղաքավարական ձեւերուն ներքև քիչ մը ազնուացած այն նշանուար «բարի եկար» ը կուգայ կը կանգնի իրենց դէմ, վերելվայր շրջելով անոնց սակի երազները...

Երբ աղայութեանս երջանիկ օրերու անուշ յիշատակները պրպտեմ, ան իմպպէս աչացս առջև կը պատկերանան հաւածուած ուսուցիչներս, որոնց միակ յանցանքն այսինչ կամ այն ինչ աղային «Քէյֆ» ը չ'ընելու յանդգնութիւնը և կամ նոյն աղային քմահաճոյքներուն չ'ծառայելու ոճիրը գործած էին. ոճիր մը, որ անմիջապէս պաշտօնազրկութեան կը դատապարտէր զիրենք, խորտակելով անոնց ներկայն ու ապագայն, ու կը հաւածէր զանոնք մինչև հոն՝ ուր ամեն բան կը վերջանայ...

Վերոյիշեալ պաշտօնատարները ստեպ անոնց կը ներկայանային պատրուակներու քօղին ներքև ծածկուած. պատրուակներ՝ որոնք առանց ո'ւ է փոքր առարկութեան տեղի տալու կ'ընդունուէին. զօր օրինակ՝ հոգաբարձուն կը հրաժարեցնէր ուսուցիչ մը առարկելով թէ՛ վարժարանի պիւտճէն չի ներեր հինգ կամ վեց սակի ամսականով դասատու մը պահել. ահաւասիկ պատրուակ մը խոշոր, որոյ դէմ խեղճ ուսուցչին առարկութիւնները կը փշրուէին, ահագին ապաւածի մը բաղխուած ալիքներու պէս. խընդիրը պիւտճէն վրայ էր. ո'վ կ'ընայ այլևս բերանը բանալու համարձակիլ...


Եթէ չ'եմ սխալիր, մինչև ցարդ և ոչ մէկ հարց ոչ մէկ ինդիր հրապարակ չէ՛ նետուած ուսուցիչներու վիճակի բարեօրման համար. վարժարանին վրայ խօսած ատեննիս ինչո՞ւ քիչ մին ալ ուշադրութիւննիս չ'ենք դարձնել այդ մարտիրոսներուն՝ որոնք կը շարչարուն այդ յարկին ներքև կրթելու ազնուացնելու համար մեր փոքրիկները, ինչո՞ւ քիչ մ'ալ չ'ենք խորհիր անոնց վրայ, որոնք անձնուրացութեամբ նետուած են այդ փշալից ասպարէզին մէջ, և որոնց

կը պարտին մեր նախնիքները . մենք և մեր ապագայ սերունդը . ինչո՞ւ է նախ ասելու ընդհանուր անունը արդար բողոքի խուլ ձայները որ կուգան կը հասնին մինչև մեր ականջներուն, ինչո՞ւ անտարբեր կը մնանք հանդէպ անոնց արդար իրաւանց և վերջապէս ինչո՞ւ կը թողունք որ թշուառութիւնը գայ բազմի անոնց գլխուն իւր անգեղ զօրութեամբ . միթէ անոնք մեր եղբայրները չեն և կամ չ'են պատկանիր մարդկային ընկերութեան :

Երբ մեր ազգին մեր ընտանեաց վրայ կը խորհինք, ինչո՞ւ կը ըրենք այս էականը որ մեր երջանկութեան մեր դիրքին մեր ստացած կրթութեան ազդեցութիւնը, մայրը . . . մէկ խօսքով պատճառն են :

ԱՐՏԱՇԷՍ ԿՄՐԱԿԱՆ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ




Պ. Ս. Փ. ԼԷՈՒՍԱՒ այսօրուրէն սկսեալ դադարած ըլլալով Նիւ-Եորքի ՏՃԻ ՄԻՉՈՒՍԱԼ ԼԱՅՅ Ապահովագրական Ընկերութեան Ընդհանուր Գործակալի պաշտօնէն, կը խնդրուի ՊՊ. Դեր-Գործակալներէ և Պատահարակութեան, մինչև նոր Ընդհ. Գործակալի մը անուանումը, ընկերութեան վերաբերեալ գործերու համար, գիտել ՏՃԻ ՄԻՉՈՒՍԱԼ ԼԱՅՅ Նիւ-Եորքի Ապահովագրական Ընկերութեան Արեւելքի Դեր-Տնօրէն Պ. ՕՍԿԱՐ ՄԻՍԸՆԷՒԻ Ի, ԻՇԵՓՏՐՈՒ ՕԹԷԼ և կամ Ընկերութեան Դեր-Գործակալ առ Տ. ԳԷՈՒԿ ԵԿԻՍՈՓ. Ի Բաւաւստ Մարտօրայտ նախկին Պակ օրօնակի դէմ :

Գահիրէ 23 Մայիս 1901

ՕՍԿԱՐ ՄԻՍԸՆԷՒՈ

ԲԱՆԴԱՍՍԱՂԸ



Բազմախաղը այն մոլութիւններէն է որ գծազգայնաբար շատ կը տարածուի մեր երիտասարդութեան մէջ և սովորել չարքներ յառաջ կը բերէ : Երեկոյները, և յաճախ ցերեկները գործի ատեն, սրճարաններուն մէջ հաւաքուած, նախով և խաղի թուղթերով դադարած, հայ երիտասարդներուն վրայ նետուած ականջի մը կը բաւէ այս մտերն մեղ համոզելու : Առաջամոլութեան ազդեցութիւնը արդէն իսկ ա՛յն աստիճանին հասած է որ մեր նուիրական յարկերը անկէ գերծ չ'են : Մեծերը՝ առանց նկատողութեան առնելու պզտիկներուն մտքին վրայ գործուած սպաւորութիւնը, այս մոլութիւնը իբր ժամանցի միջոց մը կը գործածեն իրիկանները գրօսելու : Կը ճանչնամ հայեր որ իրենց զաւակներուն հաշիւ սորվեցնելու նպատակով դիմացին կ'առնեն զանոնք և ստակով նարա կամ թուղթ կը խաղան : Անդիտակ են այնպիսիներ թէ այս սովորութիւնը մտտող միտքերուն մէջ խաղամոլութեան փափաքը գրգռելով՝ աւելի չարք կը գործեն քան բարք : Վտան թող ըլլան անոնք թէ իրենց զաւակները ապագային սովորել և յանդուգն խաղամոլներ պիտի ըլլան :

Ինչ է բողոքախաղին մղելի զօրութիւնը . ինչ է այն շղթայն որով հազարաւորներ անոր կայուն են . ինչ է այն գիւթիչ ազդեցութիւնը որուն տակ զանազան մարդ գերել կ'ըլլայ : Ոմանք պիտի, թերեւս, պատասխանեն թէ մարդուն զօջաբաղութեան յագեցումն է որ այս աստիճան կը դիւրի խաղամոլները . այսինքն իր գրացուցն ստակը առնելու փափաքն է : Այս աստիճան մը ճշմարիտ է . որովհետեւ բազմախաղին հոգին ուրիշ բան չ'է այլ գիմացինին դրամը կորցնելու բռնուն աննչ մը : Այս սկզբունքին կ'ընդհանրութիւնը կը տեսնուի աւաղակութեան

մէջ : Աւաղակն ալ կը փափաքի ճանապարհորդին ստացուածը ձեռք ձգել առանց անոր փոխարէն մը տալու . սպարանքով կամ ծառայութեամբ . և մինչ խաղամոլը իր գերագանց գիտութեան և լաւազոյն բազմին կ'ապաւինի, աւաղակը իր գերագանց ուժը և ստրատիպագրիկ զէնքերը կը գործածէ : Բայց երբ որ մանրագնին լուծելու ըլլանք այս մոլութիւնը պիտի տեսնենք թէ խաղամոլը թէեւ խիստ կը փափաքի զրպանելու սեղանին վրայի գրամմները, սակայն սակաւին պիտի նախընտրէ կորսնցնելը քան թէ բոլորովին խաղէ հրաժարելը : Նշանաւոր խաղամոլ մը ըսած է թէ « ամենալաւ բանը աշխարհիս մէջ խաղի մէջ վատը կ'ընէ և և կորսնցնելն երկրորդ ամենալաւ բանն է » : Այս զգացումը կը յայտնէ թէ խաղին մէջ իրապէս ստակ չահելէն աւելի բան մը կայ : Անիկա կ'ըրբ մը, մոլութիւն մը, աւանդութիւն մըն է որ երբ մարդու վրայ տիրէ ալ ևս զայն իրեն գերի կ'ընէ : Մարդ կ'ըրբ անէր էակ մըն է . երբ որ այս կ'ըրբերը սահմանի մը մէջ պահուին և անոնց ուրոյն նպատակներուն համար գործածուին մեծ ծառայութիւններ կը մտաւցանեն . իսկ չարաչար և ծայրայից գործածութիւնը հակառակ արդէնք կ'արատաքէ : Մերը ազնիւ կ'ըրբ մըն է . բայց երբ որ չարաչար գործածուի զմարդ անվայել վարմունքի կ'առաջնորդէ, նոյնպէս ալ ստակ չահելու բռնազոր իր առողջ վիճակին մէջ օգտակար և կարեւոր ձգտում մըն է : Անոր շնորհիւ է որ աշխարհիս ամենէն զարմանահրաշ գիւտերը կ'ընեն . անիկա կը կ'ընապակէ մեր ջանքերը և յառաջագրմութեան զարկ մը կուտայ . իսկ երբ անդապելի կ'ըլլայ ամեն չարաց տղերքն է : Բողոքախաղը կը գերագրգռէ այս բնազոր և տակաւ առ սակաւ այն կէսին կը հաննի մարդ որ այլու աչքին չ'է չահելու գրամին արժէքը, այլ կ'ուզէ միայն գոհ ընել, յագեցնել առնելու փափաքը : Այդ անձը կ'ընայ խիստ հարուստ մէկը ըլլալ, չահելիք գրամը կ'ընայ բացարձակապէս աննշան և ջնջին գուժար մը ըլլալ . տակաւին անոր ամբողջ հոգին խորատուգուած է սեղանին վրայ դրուած մի քանի գահակներ շահելու համար եղած հաշիւներուն մէջ : Երբ որ այս կ'ըրբ կը գրգռուի մարդը կը կերպարանափոխի . բանականութիւնը կ'աղոտանայ : Խոհեմութիւնը իր նշանակութիւնը կը կորսնցնէ . ազնիւ զգացումներ կը լքանին, և ինքը, մարդկային էակը, համակ կ'ըրբ կը կորի : Բնութեան անըմբռնելի և անբացատրելի մի օրէնքն է որ մեր զրկիչ չարաչար գործածութեանը մէջ հասնոյր կայ : Աւետարանի իսկ կ'ընդունի թէ կայ « մեղաց ժամանակաւոր զուարճութիւն » մը . բայց բարեխաղաբար այս զուարճութիւնը չէ թէ միայն ժամանակաւոր է, այլ նաեւ անդուտ, և անոր միջոց կ'ընկերանայ յուսալիտութիւն : Ստիկա կը նմանի Նիակարայի վրայ նաւարկելուն . անոր սկզբնաւորութիւնը հաճոյալից է : Դեռին երկու եղբերուն արիւնքէն և խնայապարար սեսարանները նուազանցներուն մեծ հաճոյք կը պատճառեն . բայց յանկարծ երբ կը զգան ջրվէժին յարուցած արագաստ հասանքին մղումը իրենց ներքեւ, և կ'իրականացնեն վախճանին անդամալիտութիւնը, կ'օթափին իրենց երանաւէտ գիւթութիւնէն և նախկին հաճոյքը կը փոխուի տանապատիկ աւելի ստոսիկ կը կ'ընէ : Եւ արդարեւ կարելի է երեւակայել աւելի ստակալի վիճակ մը քան այն որ մարդուն կ'ըրբերը կը գրգռուին և չ'կրնար գոնել զանոնք յագեցնող առարկան : Այս է այն վիճակը որ կը յանգի խաղամոլը վերջ ի վերջոյ :

Այս մոլութեան արատաքած չարքները վատնողի ենթադրուած գրամին անողին կ'անցնին : Անիկա իր երկրպագուն անողութիւնը կը խանգարէ . ժամերով խաղի սեղանին տուելու նստած, վայրահակ գրքի մը մէջ, և կրեւակայական հաշիւներու մէջ խորատուգուած ըլլալը անողը պարտական օրինաց հակառակ է, և կ'անուշի կամ ուշ պիտի անոր մարմնոյն վրայ ներգործէ : Սրճարանին կամ գիւղատան ապակեանալ և վատառողջ օդը, շահու և վնասի անբռնական և չարաչարացեալ յուզումները՝ ուրիշ բաներ չ'են այլ ստողութեան ցեցը, մարմնոյն օրգը : Մեր խնայեալ ժամերը փոխանակ այսպէս

վատնելու՝ պէտք էր բաց օդին, մարդը միտլորտի մը մէջ պարտելով կամ մարմնամարզութիւն ընելով անցնել :

Խաղամոլութիւնը գիւղատուութիւնէն աւելի վնասակար չարք մըն է սա պատճառաւ որ մինչ գիւղատուը ինքը իրեն միայն կը վնասէ, խաղամոլը ընկեր մը ունենալու է իրեն մասնակցելու : Ենթադրենք թէ երիտասարդ բարեկամ մը ունիս, և որ մը միտաղ սրճարան նստած աւանանիդ նարա կամ թուղթ խաղալ կը թելագրես : Որպէսզի խաղը աւելի ոգեւորի և հետաքրքրական ըլլայ կ'առաջարկես քանակական փայտի փորձ մը ընել : Եւ ինչո՞ւ չ'է . ինչ վնաս ունի, առանց գրամի եղած խաղը միտրինակ և գանդող է : Երկուքս ալ կ'ընանք մեր վայելելիք զուարճութեանը համար քան փարայ գոնել . չի արժէ որ այդպիսի հաճոյք քան փարայով ծախու առնենք . և ոչ մէկերնիս կը սնանկանանք, կը կործանինք քան փարայ կորսնցնելով . մանաւանդ վտանգ ալ չ'իմ որ պիտի կորսնցնեմ . թերեւս կը չահիմ և այն ատեն ուրախութիւնս կը կ'ընապատկուի : Այս տեսակէ վատառարանութիւնը որ յառաջ կը բերուի ի նպաստ բողոքախաղի : Այս առաջին փորձն է, և վտան կ'ըզգոտ քու . անձիդ մէջ թէ բնաւ անոր մոլին կամ գերին պիտի չ'ըլլաս : Բայց փորձառուները սարբեր կարծիք ունին այդ մասին : Եթէ զբոբողութիւնը ունենաս տաղչին անգամ չահելու՝ յայտնի է թէ պիտի չարուանկես և ով կ'ըրնայ գուշակել թէ ուր պիտի հասնի վախճանը :

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Փետրին 25 Մայիս . — Բրիտանական խմբերը Բալթիկի մէջ հային տակ պահուած 15 կուրի թնդանթ գտած են :

Փետրին 27 Մայիս . — Իսպանացի խմբերը սկսած են մեկնել . մտրախախտ վաղտերգէ յառաջիկայ ամիս պիտի մեկնի :

Կապէթովն 27 Մայիս . — Մինչև այժմ ժամանակաւ 666 զէպք և 308 մահ պատահած է :

Կ. Պոլիս 27 Մայիս . — Ալպանիոյ մէջ կատարուած զանազան պրօպականտներու մրցումը կ'առաւարական շրջանակներու ու

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՀԱՅԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ ՏԵՍԱՐԱՆԵՐ (8)

ԵՐԵՎԱՆԻ ՄԸ

ԿԱՄ

ՊԱԽԱԼ ԱՍԳԻՍԻՆ ԱՆՈՒՆԸ

(Շարժ . նախորդ թիւէն)

— Է՛ կենդանութեան, աղա՛ք . ըբաւ Տանտէրը գաւաթը ձեռքը՝ նշան տալով զարպիւնու :
— Սարգիս աղային կենդան, պօռացին բազմաթիւ ձայներ . չաա ցարբինե՛րձ . . .

Օղիին գաւաթները պարպուելուն պէս՝ հասնողը պատասաքող մը առաւ և յարձակեցաւ մեղիսպաշարին վրայ : Ի՛նչ ջարդ, Ի՛նչ իրտարնցում, Տեղնելու էր պատասաքողներուն կրթիւնը, և կ'ընէր պնակէն բերան, բերանէն պնակ, բաղիւիլը իրարու, գուտթներուն, շիշներուն, սեանելու էր նաեւ թէ ի՛նչ ամուր ստամուքս էր այս մարդերուն ստամուքս որ ստացրէ՛մք թթուցնելու . թիթ կամ բերան ծոռու, բանիւրին վրայէն բարսմայ, ասոր վրայէն լուրեւայ, ձուկ, տրեւայ, խալիւար, ձիթապտուղ, բողի, շահակայ քոտըղը, շահակայ ևն . իրարու ետեւէ կամ իրարու հետ կուլ կուտար գիւցաղնորէն :

Նրկրոյ գաւաթին գեւ սկզբը չի տրուած՝ Տանտէրը Մըխալըձի Միւրանին գտնալով՝
— Է՛ Միւրի՛կ . հաւա՛տ սա առնովիք ձեռքդ ա՛ն նայիմ :
Միւրան առնովիք ձեռք առաւ :

չաբուծիւնը մեծապէս իր վրայ կը հրաւիրէ: Կրտսէի թէ Բ. Դուռը, ընդդէմ այդ պոսպականդներու, կը մտածէ մեծ պետութիւններուն ներկայացնել Ալլապիսի մէջ ստեղծուած ազիոզորմ կացութիւնը:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

—Բրիտանական երկու խումբ Միջերկրականի զբաղանքը նաեւ Սըր ժօն Ֆիլքրի հրամանատարութեան տակ Յուլիս 31 ին պիտի մեկնին Մալթայէն Ազէքոանդրիոյ շրջը, ուր պիտի մնան մինչեւ 11 օգոստոսի տոյ այդ նաւերը խմբովին պիտի այցելեն արեւելեան նաւահանգիստները օգոստոսի 31 ին:

—Հուովմէն ստացուած վերջին տեղեկութեանց նայելով, էլէն թագուհույն ծննդաբերութիւնը մտաւրւտ է: Պալատի բժիշկներէն Տօքթ. Մօրեզանի և Գրիգօ պալատէն չ'են հեռանար:

Մկրտութեան արարողութիւնը ծննդաբերութենէն 30 օր վերջ տեղի պիտի ունենայ կնքահայրութեամբ Ռուսիոյ Վեհ. Զարին, որուն համար այլեայլ չըմանակներու մէջ կը հաստատեն թէ ընդունած է:

Հուովմի մէջ մեծախառն հանդէսներ տեղի պիտի ունենան մկրտութեան առթիւ:

—Մայիս 18 թուականաւ Պօլիսէն ըստացուած հեռագիրները կը ծանուցանեն թէ՛ Մեծ Վէզիր Րիֆաթ փաշա երկիցս իւր ծերութիւնը պատճառաբանելով հրաժարական մատուցած է, սակայն Սուլթանը չէ ուզած ընդունիլ անոր հրաժարականը:

Հաւանական է սակայն թէ՛ կարևոր պատճառ մը չորժառիթ եղած է Մեծ Վէզիրի հրաժարականին:

—Պր. Հէքքլ, Պաղեստինի ընկերութեան հիմնադիրը, Ռօյլիտի և Պէլէնթյորի ներկայացուցչաց հետ Պօլիս հասած է, Սուլթանի գանձուն փոխառուութիւն մը ընելու համար. պայմանաւ որ նորին Վեհափառութիւնը ընդունի իրենց Պաղեստինի մէջ

Առևտրի վրայ տեսակ երկոյթներէ անբաժան է, ըլլալով այս դասակարգին սիրական նրուագարանը: միակ գրիթէ, միակեան, Այս դասակարգի մարդոց մէջ պէտք է փնտռել առևտրի նուագել գիտցողներ: Ամեն նմանորինակ կոչունքի ահբը մասնաւոր հոգ կը ստանի իր հիւրերուն մէջ ունենալու առևտրի մտոց մը: Առանց ստոր, երկոյթին աջ թեւը պակաս պիտի ըլլար: Ամեն թող ունի իր նուագածուն, յաճախ նուագածունները: Պոտիկ բան չ'գրանանք առևտրի նուագել գիտնալը, եւ գիտցողն ալ պակիկ մարդ: Մէկ կողմ ձգելով պատիւը եւ փառքը, նուագածուն անհրաժեշտ մարդ մը կ'ըլլայ, հական « մաս կը կազմէ » բոլոր հարկինքներուն, ըլլա՛յ անուն, նշանաւոր, հարսնիք, կերակուրով գաշտագնացութիւն, եւն: Ամեն կողմէ կը հրաւիրեն վերքը, կը շոյին, կը պատուեն, կը շքփացնեն: Առջոր ու լաւ պատանները, եւ լիցուն գաւաթները անոր կ'երթան շիտակ, անոր բերանն ի վար կը լիցուն բռնի « Հայն է նե, մարդը մեզի համար կը յաջնի կոր... » Մայրախոյ փակակապութեամբ կը վարուին իրեն նկատմամբ. յետին հոգածութեամբ կ'զգուշանան ո՛ր եւ է անպատշաճ խօսքէ, վարմունքէ, սրտերնին կը գողայ որ կ'ըլլայ « բանէ մը կ'առնուի » կը վերաբարձի: Պէտքի բանի մը պէս կը գուր գուրան վրան, ինչպէս ինքն ալ կը գուրգուրայ իր նուագարանին վրայ: Այս թողին մէջ « Մըխլալը » Միհրանն էր առևտրի ին առանձնաշնորհալ պատիւները եւ օգուտները վայելողը: Ընդհանրապէս սովորելը գասակարգէն կ'ըլլան այս նուագածունք, մեկ սովորելները ըլլա-

հրէական դաշխականութիւն մը հաստատուելու ծրագիրը:

—Ամսոյս 19 ին Բէրլինէն մեկնած է իր ընտանեօք՝ Փրանսական Նախարար Պ. Փիլզօն:

Գիւանագիտական մարմինը, տը Վալտէյս Մարաշխարը, օտար զօրավարներ և պաշտօնեաներ կոյարան եկած են Փիլզօնը բարեկու: Բռէն Զինկը և Լի-Հուկ-Չանկը զայն բարեւած են հաստատարապէս:

Փրանսական Նախարարը բազմաթիւ աշակերտից ցոյցերու առարկայ եղած է. իւր մեկնման վայրկեանին մեծ քանակութեամբ ծաղիկներ նուիրած են իրեն:

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Աղեքսանդրիայէն մեր ստացած մէկ նամակէն հետեւեալը կը քաղենք: « Տեղոյս ազգային վարժարանին մէջ դայթակղական գէպք մը պատահած է:

Երկու տարեց ուսուցիչներ կը վիճին գրքի մը համար, իրենց վէճն տակաւ կռուի կերպարանք կ'ստանայ, ուր ուրեմըն անլուր հայհոյութիւններով և դաւազանի սպառնալիքներով գեղեցիկ և նորօրինակ դաս մը կ'ընծային աշակերտաց, սրտնք հիասքանչ « այս ի՛նչ խայտառակութիւն, այս ի՛նչ խայտառակութիւն » կը բացագանչեն:

Ա՛հ բարի հին ժամանակները, երբեմն ուսուցիչներն էին որ իրենց օրինակելի վարքով մանաւանդ քան խօսքով՝ կը կըրթէին իրենց սաներն, այժմ ալ աշակերտներն են որ գիտողութիւններ կ'ուղղեն ուսուցչաց իրենց անկարգութեանց համար: Նամակագիրը փափաք կը յայտնէ թէ՛ արդարեւ կ'արժէր որ « Մանրագիտակ » փութար այս մասին ևս պէտք եղածները հազորդել ի հրատարակութիւն:

—Ժողովուրդ օճիխիցի մտաւոր համարին մէջ պիտի ցուցակագրուի Խորվական ընտանիքի այն անդամներու անունը, որոնք

լով ճապուկ ու ճկուն խելքով ու մտաւորներով մարդեր, որոնք տմեն բանի կը հասնին, ամեն բանէ կը հակնան, ամեն բան կ'ընեն, խոհարարութիւնէ սկսեալ մինչեւ դերձակութիւն...: Բարձրահասակ, Ոսթրոկոտ լաւին պէս սկսուած մէկն էր Մըխլալը Միհրանը, սրամիտ աչքերով, ցած ճակտին վրայ փակած փայլուն մազերով որոնք Յոյն կառնածին մազերու պէս սանարուած էին, դարձողարձիկ քմոյր խաղերով բազմասունած, ճիւղաւորուած, աչիկո՛ծ: « Միւսիւ Միհրանը » ինչպէս կ'ըսէին աղջիկները Միհրանը ինչպէս կ'ըսէին էրիկ մարդիկ, թաղին էն շքեղ փետառուն էր ուստի՝ մայրերը յոյսի չիւր քաշելու վրայ էին իր վրայ իրենց աղջկանց հրամանին վճարելի, անտուշ պայմանաժամով:

Ըսինք թէ Մըխլալըն ձեռք առաւ առևտրի վրայ քովը բարձին վրայ դրեր էր. նախափորձելէն, քանի մը անգամ հազոգալէն, երկու երեք շունչ ծխելէն, ու գինքը շողկալուելու համար երկնցուած գաւաթ մը օղին պարպելէն ետքը՝ սկսաւ: Գերազանցապէս ժողովրդային նուագարան մըն է առևտրիք. մէկ կողմ ձգելով իր աժանութիւնը եւ գիւրաւ ուսանելիութիւնը, հզօր բազուկներ, ժողովրդային միաններ պէտք է զայն ժամերով շարժելու համար փքոցի մը պէս: Ժողովրդային մասնաւոր իր քօնաք բարեմիտ ձայնին համար որ տիրու երգերը անգամ կարճեա խնդալով կ'ըսէ՝ ճիշտ ինչպէս բարեկենդանի ծպտումները ծիծաղ միայն կ'ազգեն որքան աճաւոր կամ մթին ըլլան իրենց ներկայացուցած գերերը: Փողոցայրջիկ շարժանայն ան-

փռէնտեսութեան սիրովին արժանացած են ներկայ տարւոյս Մայիս 16 ի նախարարաց խորհրդոյ նախագահն ուղղուած խորվակական բարձրագոյն մի համանագրոյ:

—Անցեալ շաբաթ գիշեր Աղեքսանդրիոյ հայ կաթողիկոսներու եկեղեցին գողեր մտած են և արժաթեղէն ու ոսկեղէն անօթներ, ինչպէս նաև եկեղեցական զարդեր և շուքառներ՝ մօտ 150 ոսկու արժուղութեամբ՝ գողցած են:

Կէս գիշերէ վերջ ժամը երկուքին Ռեմլէի կայարանին մօտ դաւիթ մը նկատելով որ թեւն տակ շատ մը կապոցներ գրած մէկը կը փայլի, բռնած և ստիկանատուն տարած է. ձերբակալուողը տեղացի մ'է՛ Հաֆըզ ահմէտ անունով, սր յայտարարած է թէ այդ առարկաները ինքը գտած է ծովուն եզերքը՝ Հայոց եկեղեցւոյն մօտ: Ոստիկանութիւնը չորս ուրիշ տեղացիներ ևս ձերբակալած է, որոնք գողութեան իրր հեղինակներ կը կասկածուին:

ԱԶԴ

ԱՐՇԱԼՈՅՍԻ Տպարանէն մաքուր թղթի վրայ շքեղ տպագրութեամբ արդէն լոյս տեսած է ԱԶԴՍԻՆ ՍՈՒՄՍՆԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԳԵՐԵՐ՝ որը երկաթ տարիներէ ի վեր սպառած էր:

Այս ութ ու կէս երկսիւնակ մեծազիր Փօրմայով գիրքը Գահիրէի Հայոց Հրատարակչական Ընկերութեան երախայրիքն է:

Կը վաճառուի « Արշալոյս » ի խմբագրատունը՝ և ի ԿՈՍՏՆՍՆՍՊՈԼԻՍԻՆԻ, Տիար Գառնիկ Սիրունեանի սեփական արձաշանի մէջ: Իւրաքանչիւր օրինակի գինն է ԵՐԵՎՈՒՆԻ:

Կը խնդրեմ յորդոյ հասարակութենէն որ Եւրոպա մեկնելէս առաջ, ամեն անոնք որ ինձ հետ կարգադրելիք մի գործ ունին մինչև Յունիս 2 դիմեն ուղղակի հասցէիս՝ ԱՐՄԵՆԱԿ ՓԱՓԱԶԻԱՆ Boite Postal N° 140

միջպէս ետքը կուգայ, եւ շատ հեռու է ազնուաշուք գաշնակէն: Երբ ներկայ ականջներուն այնքան ընտանի իր ձայնը, մտերիմ խաղերը սկսան յորդի օղիով արդէն տաքցած ուղեղներուն մէջ, մեծախոր ուրախութիւն մը պայթեցաւ սենեակին մէջ: Կեցցէներ, աֆերիսներ, բացառանշուքներն, արձագոյնգումներ լիցուցին սենեակը, ելան իջան, իրարու խառնուեցան, գարնուեցան միշտ պարպուող ու միշտ լիցուող օղիի գաւաթներուն հետ: Խառնալու բաժակաճտեր առաջարկուեցան Սարգիս աղային կենացը, Միւսիւ Միհրանին կենացը:

Ատեն տունն, — Միւսիւ Միհրանին օղի մը, կը պոտար բարտիրա մէկը, կին կամ էրիկ մարդ: Եւ Մըխլալըն կը կոնծէր օղին եւ կը շարժէր փքոցը, կը շարժէր փքոցը եւ կը կոնծէր օղին:

— Միւսիւ Միհրանին մեղե Վը: Եւ, առանց չափազանցութեան, 10 պատուաբաղներ կ'երկնային դէպի նուագածուն. սր չ'էր գիտեր որը անել ուր մերժել, եւ ճարը հասած կ'ստիպուէր մէկիկ մէկիկ, իրարու ետեւէ կուլ տալ:

Երգերը իրարու կը յաջորդէին, կը վերադառնային, կուգային կ'երթային, Պարսկերէսկ Մոսկուէնի...:

Եւ, Եւրոպայի ս'աղար՝ Եւրոպայի...:

Եւ, Ա՛ն սա երկու օրեակ վարի սուր սա՛ր...:

Եւ, Օրասար չաւուր ետեւսն կի...:

Եւ, (Մնացեալը յաջորդով) ԴԻՏՈՒԿ

ՄՐԱՌ ԼԱՅՔ

ԼՈՆՏՈՆԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնեալ 1843

Բացարձակ ապահովութիւն . — Չափաւոր ապահովագրին . — Ապահովագրի Գնութեան համաձայն շահու առաւելութիւն . — Իրաւանց պահպանութիւն՝ ապահովագրի վճարմանց յապաղումի պահուն . — Չափող պարագաներու մէջ անմիջական հաշու ելարդարութիւն . — Եւ հուր բաժանում ա՛ւնն Հինի ՏԱՐԻՆ մէկ անգամ :

Ս. ԼԵՕՆԱՐ

Ընդհանուր ներկայացուցիչ եգիպտոսի

ԲԱՐԻՈՒՏԻ ԸՆՏԻՐ ԱՆՈՒԻ

Ունէին՝ ք մինչև ցարդ հայ մը որ գիտնար մտածել թէ՛ անուխն ալ մեծաքանակ սպառում կ'ունենայ եւ կրնայ կարեւոր շահ արտադրել :

Սոստուրի այդ ապարէզն ալ օտարներուն թողուած էր :

Տիար Յակոբ վարդանեան (Սանտոսանի քեռորդի) այժմ ամենաքննարկ անուխի վաճառականութեամբ կ'զբաղի եւ մրցում բացած է օտարներուն դէմ :

Իրմեցէ՛ք իր մթերանոցը Սուգ-Սուտար թիւ 17 եւ 18 :

Անխարդարս կշիռ եւ չափաւոր գին :

ՍԱՍՈՒՆ ԵՒ ԶԷՅԹՈՒՆ

Հեղինակութիւն — ՍԻՄՈՆ ՖԵԼԷՅԱՆԻ

ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐՇԱԼՈՅՍԻ

Գին 10 Դահեկան ողջ :

ԿԱՐԳԱՅԵՔ

Իբր բանասիրական հրատարակուած «Պախալ Սարգիսի երեկոյթին» աւարտումէն վերջ, Տիար Ա. Պալեանի իրական կեանքէ առնուած մէկ նորավէպը :

ANCH'IO SON' UOMO (ԵՍ ԱԼ ՄԱՐԴ ԵՄ)

ՀՐԷՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՎԱՐՔԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱԶԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԻՐԱԿԻ 26 ՄԱՅԻՍ 1901

Table with 6 columns of numbers: 695 1569 4607 6224 63 573, 610 726 1400 1861 1981 2240, 2695 2797 3365 3682 4029 4783, 5448 6164 6222 6357 6379 6410, 6493 6597 7247 7478 7861 8978


ՀՆԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱԶԱՆՈՒԹԻՒՆ ԿԻՐԱԿԻ 26 ՄԱՅԻՍ 1901

Table with 6 columns of numbers: 2558 4672 9017 474 6541 508, 1155 1402 1473 1602 1662 2443, 3229 3397 3497 3776 4066 4985, 6282 7199 7683 8257 8543 8584, 8767 9697 9860

Տպագրուցիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ՏՀԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԽԱՌԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻՆԱՐ 563 ՄԻՆՈՆ Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները: Ապահովագրեալներուն արգէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻՆԱՐ 480 ՄԻՆՈՆ որ գրեթէ աշխարհի ուրիշ սրե է ընկերութեան մէկ միլեար աւելի է: ԳԷՈՐԳ ԵԿԱՒՕՑ ներկա յայտուցիչ ի Գահիրէ Աշխարհի մէջ գտնուող ուրիշոր եւ է ընկերութեան աւելի երաշխաւարութիւններ, ընդարձակ գործառնութիւններ եւ հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի եւ աւելի ապահովագրին կը գանձէ: ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՎ գլխաւոր գործակատար յ'Աղբ քսանգրիա :

Ս Ի Ն Կ Ե Ր ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ժ. ՆԱՅՏԼԻՆԿԻՐ Պալաքի փողոց . Խաչնէտարի սեփականութիւն, Պրիսթլ Օթիլի ճեշդ գիմաց, Գաթէ Տը Լա Պուրսի կից . ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՂՈՐ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՁ 6500 ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Սինկլի րներն են եւ ասոնցմէ մինչև ցարդ 17,000,000 ծախուած է : 400 հ աւելի վիսյակներով եւ մեխայներով վարձատրուած, երաշխաւորեալ մեքենաներ . ԱՄԵՆԷՆ ՄԵՆՎ ԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստաներիսին մէջ ստացած է : ՀԱԳՐԱՅԻՉ ԲՐՈՒՍԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՔԻՆ ՀԱՅՐԱՅԻՉ ԱՆԳՂՈՑ ԳԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՒ ԲԱԿԱՌԱՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԵԱՑ ՀԱՅՐԱՅԻՉ Ն. Բ. ԽՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ Զրի դասեր եւ նորոգութիւններ, Սինկլի մեքենայից համար, յաճախորդաց տուններուն մէջ . Վճարմանց Դիւրութիւն Փոխանակութիւններն մեքենայից եւ նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից



ԿՕՇԿԱԿԱՐ Գ. ԵՒ Յ. ՊԵՏՐԵԱՆ ԵՂՔԱՐԲ Պագար-Մուրուր ք/ա 39 Կ'ուզէ՞ք ունենալ հմուտ վարպետի ձեռքէ ելած, ֆրանսական նորաձեւութեանց համապատասխանող, սուքերը կոշտերու ցաւերէն ազատ պահող եւ դիմացկուն կոշիկներ : Իրմեցէ՛ք ի Պագար-Մուրուր թիւ 39 խանութին մէջ հաստատուած Պէշիբեան եղբարց, որոնց գործածած ապրանքներու տողունութիւնն եւ ձեւերու մասին ունեցած հոգածութիւնը ամեն տարակոյսէ վեր է : Պէշիբեան եղբարք իրենց յաճախորդաց ըրած յանձնարարութիւնները փութով եւ մեծ խնամով կը պատրաստեն : Բաւ է միայն մէկ անգամ դիմել իրենց, ապահովագէս մնայուն յաճախորդ պիտի լինիք :

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԵՒ ԲԱՐՇԱԼՈՅՍԻ ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900 ԾԱՌԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԶԻ ՍԿԶՐԸ Օսմանիյի ղեկարմինի ղիմացի փողոցին մէջ. Ժողովրդական Տպարանին մէջ կը պատրաստուին . Այցեխարտեր, Երջարտեալներ, Գիրքեր, Հրաւիրագրեր, Մանագրեր, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տոմսեր և այլ և այլ տպարանի վերաբերեալ յանձնարարութիւններ կը վաճառուին հետեւեալ գրքերն . 1. ԲՆԱՇԻԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆԻ Ա. Ե Բ. պրակներն . 2. ՈՐԲՈՒՆԻ որոյ ի Թուրքիա մուտքը, ինչպէս կը լսենք, արգիլուած է : 3. ՀԱԻԱՔԱՌՈՑ հայոց ժողովրդական երգերու :